ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Ռոման Ավդալյանը, Խաչատուր Բալասանյանը, Անի Գալստյանը, Հովհաննես Գասպարյանը, Արտյոմ Գեվորգյանը, Սահակ Գյուլինյանը, Սոֆիա Խաչատրյանը, Գոռ Մեծոյանը, Վարդան Պապյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ստելլա Բադալյան, Խոսրով Թարվերդյան, Նարեկ Մարգարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14- Ի ԹԻՎ 10- ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 14-ի երկրորդ նստաշրջանի հերթական թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 18-ի N 18-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

2.Նոր Հաճըն համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի 3 -րդ եռամսյակի կատարման մասին:

3. Նոր Հաճըն համայնքի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին

4.Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին

5.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 117-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

6.Նոր Հաճըն համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34 –րդ հոդվածների պահանջներով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 18-ի <<Նոր Հաճըն համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 18- Ա որոշման հավելվածում կատարել լրացում՝

1)Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հավելվածում լրացնել բաղկացուցիչ մաս կազմող հողերի կառավարման ամենամյա ծրագրերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98_Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,պահանջներով ՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին, լսելով համայնքի 2024 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2024 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99_Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ /

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է. Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո 2 ու մ է.

Տալ հավանություն Նոր Հաճընի համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում,Նոր Հաճընի համայնքի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման և նոր տանիքների կառուցման , Նոր Հաճընի համայնքի Նոր Գեղի և Մրգաշեն գյուղերի կոյուղագծերի կառուցում,Նոր Հաճընի համայնքի Քանաքեռավանի գյուղի Արվեստ դպրոցի կառուցում,Նոր Հաճընի համայնքի համայնքապետարանի շենքի և հարակից տարածքի բարեկարգման, Նոր Գեղի գյուղի ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորություն, Նոր Հաճընի համայնքի <<Արգելի մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ - ի օժանդակ շինության հիմնանորոգում,աշխատանքների սուբվենցիայի ծրագրային հայտերին և ներկայացնել դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ՝ համաձայն 1-10 հավելվածների:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի <<Նոր Հաճըն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկի 2024թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին » N 117-Ա որոշման հավելված 3-ում և 4-ում կատարել փոփոխություն:

1) Որոշման հավելված 3-ը և 4-ը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2- ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2- րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվական նոյեմբերի 29 -ը՝16:00 ժամը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՄՄԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱՐԵԿՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը